

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի 2014 թ. հունիսի 24-ի նիստի
(արձանագրություն N 14)

Համալսարանի գիտական խորհուրդը, լսելով և քննարկելով «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման նոր կարգի և դրա ներդրման մասին» հարցը (զեկուցող՝ Մ.Ավագյան), արձանագրում է՝ 2013/14 ուսումնական տարում ռեկտորի հանձնարարականով գնահատման նոր համակարգը փորձաշրջան է անցել Սկզբնական կրթության և Հատուկ կրթության ֆակուլտետների առաջին կուրսերում: Կրթական բարեփոխումների վարչությունը, վերոգրյալ ֆակուլտետները, գործընթացում ներգրավված ամբիոնները մշտապես կազմակերպել են քննարկումներ փորձաշրջանի ընթացքի և նրա բարելավման հարցերով: Կազմակերպվել են հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում, կատարվել վերլուծություններ: Հիմք ընդունելով վերոնշյալը՝

Գիտական խորհուրդը որոշում է.

1. «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման» նոր կարգը ներդնել ՀՊՄՀ ֆակուլտետների 1-ին կուրսերում 2014-15 ուստարվա սեպտեմբերի 1-ից:
2. Հանձնարարել ՀՊՄՀ պրեռեկտորներ՝ Ս.Գևորգյանին, Տ.Ավագյանին, Մ.Մելիք-Բախշյանին
 - Սկզբնական կրթության և Հատուկ կրթության ֆակուլտետներում իրականացված քննարկումների, հնչած առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կատարել « Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման» կարգում համապատասխան փոփոխություններ և ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը 2014 թվ-ի սեպտեմբերին:
 - Համակարգել ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման նոր կարգի ներդրման ուղղված ուսուցողական սեմինարները բոլոր ֆակուլտետներում, վերահսկել գնահատման էլեկտրոնային մատյանի և գնահատման առարկայական մուտքագրման պորտալի ծրագրավորման և կիրարկման աշխատանքները:
3. Հանձնարարել կրթական բարեփոխումների և որակի վարչությանը՝
 - ս/թ հունիս- սեպտեմբեր ամիսներին կազմակերպել ուսուցողական սեմինարներ ֆակուլտետների և ամբիոնների որակի ապահովման պատասխանատուների, 1-ին կուրսերում աշխատող դասախոսական անձնակազմի 1-ին կուրսի ուսանողների համար
 - Ուսուցողական սեմինարների անցկացման համար մշակել և տրամադրել ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման նոր պահանջներին համապատասխան մեթոդական ուղեցույց և բաշխիչ նյութեր:
4. Հանձնարարել ՀՊՄՀ համակարգչային տեխնոլոգիաների կենտրոնի ծրագրավորող խմբին՝
 - Մինչև սույն թվականի հոկտեմբերի 15-ը ավարտել աշխատանքները և ներդնել ՀՊՄՀ գնահատման էլեկտրոնային մատյանի և գնահատման առարկայական մուտքագրման համակարգը ապահովող պորտալը:

5. Հանձնարարել ՀՊՄՀ ֆակուլտետների դեկաններին՝
- Ապահովել շահագրգիռ կողմերի մասնակցությունը ուսուցողական սեմինարներին, ներդնել 1-ին կուրսերում գիտելիքների ստուգման և գնահատման նոր համակարգը 2014 թվականի սեպտեմբերից,
 - Պարբերաբար անդրադառնալ նոր համակարգի ներդրման խնդիրներին ֆակուլտետային խորհրդի նիստերում:
6. Հանձնարարել ՀՊՄՀ բոլոր ամբիոններին
- Ապահովել 1-ին կուրսերում աշխատող դասախոսների մասնակցությունը ուսուցողական սեմինարներին,
 - Համապատասխանեցնել դասընթացների առարկայական նկարագրերը «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման» նոր կարգի դրույթներին,
 - Պարբերաբար անդրադառնալ նոր համակարգի ներդրման խնդիրներին ամբիոնի նիստերում:

Ռեկտոր

Ռուբեն Միրզախանյան